ԴՐԱԲԱՐ ՆՈՐ ԲԱՌԵՐ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՍՏ ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ

Նոր Հայկազյան բառարանի[1] լույս ընծայումից հետո գրաբարի բառադանձը նոր բառերով և նոր նշանակություններով համալրելու գործը եղել է հայագիտների մտահոգության առարկան։ Մ. Ջախջախյանի, Մ. Ավգերյանի, Հ. Աճառյանի կողքին այդ տեսակետից հիշատակելի աշխատանք է կատարել ականավոր լեզվաբան-բանասեր Նորայր Բյուզանդացին։

Նորայր Բյուզանդացին (1844—1916) իր ստեղծագործական վերջին տարիները անցկացրել է Սառկհոլմում բացառիկ դժվարին պայմաններում, նյութական կարիքի մեջ։ Ժամանակակիցների կողմից մեծ հայագետ համարվող «վարպետը» իր նամակներից մեկում հուսահատությամբ նկարագրելով իր լքյալ վիճակը, գրում է, որ, եթե գրականությամբ չզբաղվեր, նպարավաճառ լիներ, դուցե այդքան անապահով կյանք չունենար[2]։

Նոր Հայկազյանի համեմատությամբ գրաբար լրացուցիչ բառեր պարունակող տպագիր աշխատությունների մեջ արժեքավոր են՝ Մ. Ջախջախյանի «Բառագիրք ի բարբառ հայ և իտալական» (Վենետիկ, 1837), Մ. Ավգերյանի «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (Բ, Վենետիկ, 1865), Հ. Աճառյանի «Հայերեն նոր բառեր նորագյուտ մնացորդաց գրոց մեջ» (Վիեննա, 1906), «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» (Ա, Վենետիկ, 1913, Բ, Վենետիկ, 1926), «Հայերեն արմատական բառարան» (Երևան, 1926)։ Մինչև օրս ուշադրության չի արժանացել Նորայր Բյուզանդացու բառարանագրական անտիպ աշխատությունը՝ Նոր Հայկազյանի էջերի վրա նրա կատարած լրացումների վերաբերյալ[3]։

Գրաբարի հանդամանալից ուսումնասիրման համար Նորայր Բյուզանդացին ձեռքի տակ ունեցել է ոչ միայն V—XII դդ. տպագիր մատենագիրներին, այլև նույն շրջանին վերաբերող ձեռագրեր՝ պահպանված Մխիթարյան միաբանության Վենետիկի վանքում, Փարիզի ֆրանսիական ազգային, Պոլսի հայկական ազգային, Անտոնյան հայրերի, Բոսֆորի Միջագյուղի վերծանության թանգարանի մատենադարաններում[4]։

---

1 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, Բ, Վենետիկ, 1837։

2 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. 235, վավ. 23։

3 Մատենադարանում պահպանվում է Նոր Հայկազյան բառարանի էջերի վրա Նորայր Բյուզանդացու կատարած ձեռագիր լրացումների մանրաժապավենը։ Լրացումներն արված են առանձին թերթերի վրա և զետեղված Նոր Հայկազյանի համապատասխան տեղերում։ Լրացումների ձեռագիրը դժվարընթեռնելի է, բերված վկայությունների աղբյուրների հապավումները՝ շատ դեպքերում անհասկանալի և թերի։

4 Նորայր Բյուզանդացի, Բառգիրք ի գաղղիերեն լեզուե ի հայերեն, Կ. Պոլիս, 1884, Առաջաբան։

Ձեռնարկելով այդ աղբյուրների հիման վրա կատարված լրացումների ուսումնասիրման գործին՝ նպատակահարմար համարեցինք գտնել Նորայր Բյուզանդացու օգտագործած սկզբնաղբյուրները՝ V—XII դդ. վերաբերող ա տառով սկսվող մի շարք լրացումների համար[5], դրանց հիման վրա հշդրտել այդ լրացումների կողքին նշված վկայությունների ձեռագիրը։ Անհրաժեշտության դեպքում համեմատել ենք միևնույն երկի տարբեր հրատարակությունները։

Լրացումների հավաստիությունն ապացուցելուց հետո բերված գլխաբառերը համեմատեցինք Առձեռն բառարանի, Մ. Ջախջախյանի Հայերեն-իտալերեն, Հ. Աճառյանի Արմատական բառարանների, Հ. Աճառյանի «Հայերեն նոր բառեր Նորագյուտ մնացորդաց գրոց մեջ», «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» աշխատությունների բառացանկերի հետ։ Այս բոլորից հետո եկանք այն եզրակացության, որ համեմատված լրացումների թվում կարելի է տարբերել 4 խմբի բառեր։

1. Բառեր, որոնք բացակայում են Նոր Հայկազյան, Առձեռն, Մ. Ջախջախյանի Հայերեն-իտալերեն, Հ. Աճառյանի Արմատական բառարաններում, Հ. Աճառյանի «Հայերեն նոր բառեր Նորագյուտ մնացորդաց գրոց մեջ» և «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» աշխատություններում։

2. Բառեր, որոնք բացակայում են Նոր Հայկազյան, Առձեռն, Հ. Աճառյանի Արմատական բառարաններում, Հ. Աճառյանի «Հայերեն նոր բառեր նորագյուտ մնացորդաց գրոց մեջ» և «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» աշխատություններում, սակայն առկա են Մ. Ջախջախյանի Հայերեն-իտալերեն բառարանում։

---

5 Քիչ թիվ չեն կազմում նաև հետագա շրջանին (XII—XVII դդ.) վերաբերող լրացումները։ Նորայր Բյուզանդացին շատ դեպքերում լրացումից անմիջապես հետո նշել է տվյալ գլխարառին հնչյունապես մոտ մի հոմանիշ, որ կա Նոր Հայկազյանում։ Հարց է ծագում, ինչո՞ւ տվյալ իմաստի համար հատկապես այդ հոմանիշն է ընդգրկվել Նոր Հայկազյանում, իսկ Նորայր Բյուզանդացու համապատասխան հոմանիշը դուրս է մնացել։ Նոր Հայկազյանի «Նախաբանքիս», «Ստորագրեալ մատենիդ և մատենագրաց յորոց քաղեցան բաւք բառարանիս» հատվածում հեղինակները տեղեկացնում են «զնդ բառս և զնդ ոճս առաջնոց և միջնոց և յետնոց» ընտրություն կատարելու իրենց հայեցողության մասին։ Ընտրության սկզբունքը, ինչպես երևում է, եղել է միմիայն հեղինակների ճաշակը, այլապես ինչո՞վ բացատրել, որ բառարանից դուրս է մնացել ազդոպլականությունն բառը (Եփրեմի մատենագրություն) և նախապատվություն տրվել ամփոփման օրենքով դրանից առաջացած ազդոպլության հոմանիշին, որ առկա է նաև Առձեռն և Ջախջախյանի Հայերեն-իտալերեն բառարաններում, նախապատվություն է տրվել նաև առամինազուցանում պատճառական բայաձևին, երբ հին մատենագրության մեջ գոյություն է ունեցել նույն նախատիպից կազմված առամինաւորում հոմանիշը (Ոսկերերան)։ Նույն հանգամանքով կարելի է բացատրել նաև, որ սխոտաշուրդությունն բառն բնգունելով հանդերձ, Նոր Հայկազյանի հեղինակները անտեսել են նմանօրինակ կազմություն ունեցող սխոտազարշությունն-ը (Նարեկացի)։

Նորայր Բյուզանդացին Նոր Հայկազյանը համալրել է ածանցավոր (նախածանցավոր և վերջածանցավոր) գոյականներով, ինչպես՝ անազգությունն, անանդությունն, ապյանձնությունն. այնորոյր, արհամարհումն, բարդ գոյականներով՝ անուանագիր, աղանդահայր, արձակավնիս, ածանցավոր բառերով՝ անգզուշանամ, բարդ բայերով՝ ազդատոհմիմ, վերլուծական կազմություն ունեցող բայերով՝ արօրաթեկ ասնել և այլ կազմությամբ բառերով։

Նորայր Բյուզանդացու լրացումները Նոր Հայկազյան բառարանի բառացանկին բերված օրինակներով չեն սպառվում։ Դրանք խիստ արժեքավոր են ինչպես գրաբարի բառարանների համալրման, այնպես էլ առանձին բառարաններում առանց վկայության բերված գրաբար բազմաթիվ բառերի սկզբնաղբյուրը բացահայտելու տեսակետից։

3. Բառեր, որոնք բացակայում են Նոր Հայկազյան բառարանում, Մ. Ջախջախյանի Հայերեն-իտալերեն բառարանում, Հ. Աճառյանի «Հայերեն նոր բառեր նորագյուտ մնացորդաց գրոց մեջ» և «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» աշխատություններում, սակայն առկա են Առձեռն բառարանում։

4. Բառեր, որոնք բացակայում են Նոր Հայկազյան, Առձեռն, Մ. Ջախջախյանի Հայերեն-իտալերեն բառարաններում. սակայն առկա են Հ. Աճառյանի Արմատական բառարանում, «Հայերեն նոր բառեր նորագյուտ մնացորդաց գրոց մեջ» կամ «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ» աշխատություններում։

Այստեղ բերում ենք վերոհիշյալ 4 խմբի լրացումները Նորայր Բյուզանդացու գրած վկայություններով հանդերձ (առայժմ ա սկզբնատառով)։

ՍԻԲՈՒՀԻ ՋՈՐԱՎԱՐՅԱՆ

I ԽՈՒՄԲ

Ազգատոհմեա—«Յետ ջրհեղեղին դարձեալ յաղագս Դեւկալիոնոսի և Պիւռայի կնոջ սորա, իբրու ասէ առասպելն. և զառ ի սոցանէ ծնեալն ազգատոհմելս։ Մատենագրութիւնք նախնեաց, Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք Եւթիփռոն, Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմէոս, Վենետիկ, 1877, էջ 83։ «Եւ արդ այգ զոր գուդ ազգատոհմեա, ո՛վ Սողոմոն, և զոր ասացեր յաղագս ձերոյ որի՝ քան զառասպել մանկանց սակաւ ինչ ունի տարբերութիւն»։ Մատենագրութիւնք նախնեաց, Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք Եւթիփռոն, Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմէոս, Վենետիկ, 1877, էջ 85։

Ազդողականութիւն—«Ասաց զիրն զինչ է բնութիւն նոցա (աստեղաց). կամ զինչ է ազդողականութիւն՝ յայտնեաց»։ Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, Վասն Երաշտի և վաշխառուաց, հ. Դ, Վենետիկ, 1836, էջ 199։

Աղբերազի—«Եւ էին վիշապք բազումք ի ջուր անդր, և բազում ազգս ձկանց՝ որք հուրբ ոչ լինէին եփեալք, այլ ցուրտ ջուրք աղբերացով»։ Մատենագրութիւնք նախնեաց, Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, 1842, էջ 126։

Աղերսաբեր—«Ընկալ զաղաչանս մեր ցաւագինս և պաղատանս իմ աղերսաբերս և շնորհեա ինձ զոչումն արտասուաց ապաշխարութեան, որով զմեղս իմ քաւեցից»։ Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, Խորին Ասորիոյ, Աղօթք Բ., հ. Դ, Վենետիկ, 1836, էջ 259։

Ամբոյչութիւն—«Քանզի սա ունի փոքրագոյն ինչ յամբողջութիւն ի վերայ երկաքանչիւրոցն»։ Մատենագրութիւնք նախնեաց, Պղատոնի օրէնք կամ «Օրէնսդրութիւնք, Վենետիկ, 1890, Զ, էջ 203։ «Աղաւթիւք և խնդրուածաւք բարեկամեցուցանէին առ ամբողջութիւն բոլորակ վիճակութեան կցորդութիւն կենաց բարեաց՝ ի ձեռն երկոցունց վճարեցելոց գործով»։ Մատենագրութիւնք նախնեաց, Փիլոնի Հեբրայեցւոց ճառք, Փիլոնի կեանք իմաստնոց, Վենետիկ, 1892, էջ 34։

Անազգութիւն—«Վասն զի անդ ղանազգութիւն մարմնոյն յառաջ բերես ի հակառակութիւնն, ցուցանեմ քեզ ի միոջէ արմատոյ երկու շառաւիղս որոշեալս»։ Մատենագրութիւնք նախնեաց, Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն Յղթոյն Պաւղոսի, հ. Բ, Վենետիկ, 1862, էջ 700։

Անզգուշասում—«Մի անչափ յագեցմամբ զպարգևս Աստուծոյ վնասու պատճառս առնել անիմաստից և անզգուշացելոց մարդկան»։ Մատենագրութիւնք նախնեաց, Յովհաննու Ոսկեբերանի Անդրիական ճառք, Ա, Վենետիկ, 1861, էջ 654։

Անողոքանք—«Վասն գի իւրաքանչիւր ոք ի մեզ ախտքն՝ յորժամ զօրանայցեն՝ տեարք ծառայեցելոցն լինին... այսպէս անողորմութիւն, խստութիւն. մախանք, անողոքանք. ոխակալութիւն»։ Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա, Խոսք լինն երանութիւն, բան Գ, էջ 13, ս. 1, Մատենադարանի ձեռագիր № 436։

Անուանագիր—«Ի պատերազմի ընդ ձեզ եմ. յանուանագրի համաբուն՝ Թերևս նախագոյն կարգեալ եմ քան զձեզ»։ Մատենագրութիւնք նախնեաց. Վարք և վկայաբանութիւնք սրբոց. Վկայաբանութիւն սրբոյն Կալիստրատոսի որոց ընդ նմա քառասուն և ինն վկայիցն, հ. Ա, Վենետիկ, 1874, էջ 657։

Անսեղմութիւն—«Քանզի անբաժանելի է սուրբ երրորդութիւնն, և անսեղմութեամբ տեսաք առանձնացեալ»։ Եզիշէ վարդապետի մատենագրութիւնք, Սրբոյ Հօրն Մերոց Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, առ Տիրերեայ ծովուն, Վենետիկ, 1859, էջ 335։

Անսիգութիւն—«Սակաւապէտութիւն մեր՝ ի պահս համարեալ է, և չափաւոր արբումն՝ ի գինեհատութիւն, միջին հանդերձին յանսիգութիւն և հարկաւոր ստացուածք յազքատութիւն»։ Եզիշէ վարդապետի մատենագրութիւնք. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Յաղօթս որ ասէ Հայր Մեր որ յերկինս, Վենետիկ, 1859, էջ 206։

Անվստահանամ—«Բազում անգամ և որք բարի գիտակցութեամբն են կեցեալք անվստահանան ի հանդերձելումն» Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա, Խոսք լինն երանութիւն, բան Ե, էջ 139 ա, Մատենադարանի ձեռագիր № 1013։

Անվստահութիւն—«Փութացայ ի ձեռն առաքինութեան յոլովից լինել հայր, քան եթէ միոյ կամ երկուց կամ երից անվստահութեամբ ծնող անուանեալ»։ Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, Յաղաղս որ ունի զհարսն, փեսայ նա է, հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 373։

Առասպելախօսութիւն—«Տեղեակ և հմուտ են աւետարանին Քրիստոսի. նա ևս առաւել քան զձեզ հմուտ են ձերում առասպելախօսութեանդ»։ Ողբք վասն չարեացն աշխարհիս Հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացւոյ, Սոփերք հայկականք, ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 82։

Առիգածեմ[6]—«Ապա հրամայեաց առիգածել և դալար արջառաջլօք յանխնայ հարկանել, եւ զմանուկն հանել ի գրկաց մօրն»։ Վարք և վկայաբանութիւնք Սրբոց, Վկայաբանութիւն սրբոյն Կիրակոսի և մօր նորա Յուղիտայ, հ. Ա, Վենետիկ, 1874, էջ 694։

Ապանձնութիւն—«Զի հաւատոցս անուն մի միկին է անուանեալ, բայց երկուս ազգս բաժանեալ լինի. Մի ազգն հաւատոց ի հրամանական կուսէ, ապանձնութիւն ունի ընդ ոգիսն վասն ուրուք, և լինի օդնական ոգւոց»։ Սրանելոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի, Կոչումն ընծայութեան, Ե, Վիեննա, 1832, էջ 82։

---

6 Այս բառը Նոր Հայկազյան, Մ. Ջախչախյանի Հայերեն-իտալերեն և Մ. Ավդերյանի Առձեռն բառարաններում առկա է միայն առիգածեալ ձևով։

Արհամարհումն—«Զասաց եթէ խոնարհեաց, այլ թէ երկիր, քանզի ամբարտաւանութիւն արհամարհումն և ծուլութիւն գործէ»։ Մատենագրութիւնք նախնեաց Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն հռովմայեցւոց, ճառ ԺԹ, հ. Բ, Վենետիկ, 1862, էջ 282։

Արտարկել առնել—«Զի՞նչ ասես, ո՛վ Սամփսոն. զի եթէ ոչ արտարկել արարեալ էր ձեր երնջաւն իմով, ոչ էր գիտացեալ զառակն իմ»։ Փիլոն Երրայեցւոյ Մնացորդք ի Հայս, Որ են մեկնութիւն ծննդոց. եւ ելից, Ճառք ի Սամփսոն, Վենետիկ, 1826, էջ 574։

II ԽՈՒՄԲ

Արժանահատոյց—«Թողցե՛ս միանգամայն, բարեգործեսցե՛ս իսկապէս. հատցե՛ս բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տաժանակիրս»։ Նարեկ գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հեռտորի, ԺԵ, ի Կոստանդնու պոլիս բաղաքի, 1802, էջ 44 (նորապէս որբագրեալ՝ համեմատութեամբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց)։ Սրբոյն հօրն Մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, Գիրք աղօթից որ կոչի Նարեկ, ԺԸ, Վենետիկ, 1807, էջ 55 (տպագրեալ ըստ ընտրելագոյն օրինակաց) Զաղանս պատեհագոյնս. նգովս իրաւացիս. անէծս արժանահատոյցս»։ Նարեկ գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հեռտորի, Իէ, ի Կոստանդնու պոլիս բաղաքի, 1802, էջ 84 (նորապէս սրբագրեալ՝ համեմատութեամբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց)։ Սրբոյն հօրն Մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, Գիրք աղօթից որ կոչի Նարեկ, Իէ, Վենետիկ, 1807, էջ 100 (տպագրեալ ըստ ընտրելագոյն օրինակաց)։

III ԽՈՒՄԲ

Ալեւորոյթ—«Քանզի էր սորա մինչև յալեւորոյթ զկրօնաւորական վարս վարեալ։ Մատենագրութիւնք նախնեաց, Վարք սրբոցն Հարանց, Վարք Երանելոյն Անտոնի Եգիպտացւոյ Միայնակեցի թուղթ Աթանասի, հ. Ա, Վենետիկ, 1855, էջ 58։ «Քանզի այսպիսին կարէ ասել՝ եթէ զմեղս մանկութեան և պանգիտութեան իմոյ մի յիշեր, որ ի ծերութեան զպատշաճն գործիցէ, որ յալեւորոյթն դառնայցէ»։ Մատենագրութիւնք նախնեաց, Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոյն Պաւղոսի, է, հ. Ա, Վենետիկ, 1862, էջ 493։

Ալէփարթամ—«Ալէփարթամ խորոցն ջրայեղց բռնութիւնք անդէն յինքեանս սուզան»։ Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, հ. Բ, Իէ, Մոսկվա, 1860, էջ 153 (ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին)։ Մովսիսի Կաղանկայտուացւոյ Պատմութիւն Աղուանից, դ. Բ, Իէ, Փարիզ, 1860, էջ 314։

Ախտագարշութիւն—«Բռնաւորագոյն պատճառ և հարկեցուցիչ ի մեղս՝ ունի ղցանկութիւնն մարմնոյն և զթելադրութիւն սատանայի և զբորբոքումն յախտագարշութիւն»։ Մատենագրութիւնք նախնեաց, Գրիգորի Նարեկայ Վանից վանականի, Մատեան ողբերգութեանց, Խրատ ԽԸ, Վենետիկ, 1840, էջ 512։

Ակնագնացութիւն—«Վասն պոռնկութեան. իգասիրութիւն. ակնատեսութիւն, ակնագնացութիւն»։ Յովհան Մանդակունի Հայոց Հայրապետի ճառք. Բան խրատու առ ճգնաւորսն, Վենետիկ, 1860, էջ 217։

Ակնատեսութիւն—«Յանկութիւն, գիճութիւն, իգասիրութիւն, ակնատեսութիւն»։ Յովհան Մանդակունի Հայոց Հայրապետի ճառք, Բան խրատու առ ճգնաւորսն, Վենետիկ, 1860, էջ 217։

Աղանդաճայր—«Զոր ապա յետ այսորիկ փափագեցին երկոքին կողմանքն անուամբ մեծին Գրիգոր(ի) (տպ. Գրիգոր) խոստովանողին Քրիստոսի խառնել (տպ. խառնեալ) զսուրբ անուն ընդ անուանս աղանդաճարցն իւրեանց»։ Խոսրովիկ թարգմանիչ, Արարատ, Վաղարշապատ, 1899, Մայիս, էջ 216ա։

Աղբակիր—«Եւ հասանէ տեսանել այնուհետև աղբակիրս, որթաւորս, թիւորս զամենեսեան խառն և անհարց ի ներքս մտեալ»։ Մատենագրութիւնք նախնեաց Յովհաննու Ոսկեբերանի, Մեկնութիւն թղթոյն Եփեսացւոց. հ. Ա, ճառ X, Վենետիկ, 1862, էջ 782։

Աղեղնաձիգ—«Եվ կացին զօրավարք Մամիկոնք ճակատամուխք ռազմահատք, աղեղնաձիգ, արծուանշանք»։ Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի, Սոփերք հայկականք, Զ, Վենետիկ, 1853, էջ 17։

Այլացաւ—«Ճշմարտութեամբ ասել գնմանէ, եթէ յիմաստութենէ ոչ օտար և բարետոհմիկ, այլ և ոչ հիւանդ ոք, կամ այլացաւ կամ օտարուսումն»։ Ողբք վասն չարեացն աշխարհիս Հայոց և վկայութեանութիւն Սրբոյն Վահանայ Գողթնացւոյ, Սոփերք հայկականք ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 45—46։

Անժամակերութիւն—Այլ և չպահեցողութեամբ և անժամակերութեամբ եպէրէին ասեն, ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն. և քո աշակերտքդ խառն ուտեն»։ Ղազարայ Փարպեցւոյ թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնեից, Մոսկվա, 1853, էջ 43։ Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1891, էջ 647։

Առաքինաւորեմ—Զի թլպատութիւնն առաքինաւորէ զմարդն. այն իսկ է մարդ ճշմարիտ»։ Մատենագրութիւնք նախնեաց, Յովհաննու Ոսկեբերանի, Մեկնութիւն թղթոյն Փիլիպեցւոց, հ. Ա, Վենետիկ, 1862, էջ 461։

Առբառնամ[7]—«Եւ այնպէս յորձանս առնոյր տակաւին իբրև թէ առբարձեալ է ի կայծականց հրոյն»։ Վարք սրբոյն Գէորգայ զօրավարին, Վենետիկ, 1849, էջ 24։

IV ԽՈՒՄԲ

Ազազայէլ—«Եւ իբրև զայն զնոխազն աղազայէլի»։ Սրբոյն Եփրեմի մատենագրութիւն, Մեկնութիւն ելից, հ. Ա. Վենետիկ, 1836. էջ 218։ «Վիճակ մի յանուն Տեառն և վիճակ մի աղազայէլի յանապատ... սոյնպէս և աղազայէլ, զի յիշեսցեն գասստկութիւն նորա և զբարկութիւն նորա՝ որ եղե ի վերայ նոցա յանապատի անդ, և արգելցին նոքա ի մեղաց, զի աղազայէլդ՝ սաստկութիւն Աստուծոյ անուանի»։ Մատենագրութիւնք նախնեաց, Սրբոյն Եփրէմի մեկնութիւն Ղեւտացւոց, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 222, 223։

Աղանուր—«Աղանուր խափանել զարիւնաթոյրն հեղմունս. Եւ կաւ փրկիչ լինի որովայնապնդութիւն»։ Պիսիդեայ Վեցօրեայք, Վենետիկ, 1900, տող 1531։

---

[7] Այս բայը Առձեռն բառարանի բառացանկում արձանագրված է առբարձեալ ձևով։

Անկյուրոս—«Երթայ, ասէ, Եքինոս խթի ընդ քարիւն, և մածնու կայ և նմա իբրև ղանկիրոս, որ իշանէ մածնու կայ ի վերայ երկրի»։ Մատենագրութիւնք նախնեաց Սրբոյ Բարսղի Կապադովկացւոյ ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, է, Վենետիկ, 1830, էջ 150։

Ասրու—«Այդ նոճ ու բողբոջ ասրաւսգ, Զարդ առեալ վարդն շուշանին»։ Մատենագրութիւնք նախնեաց Գրիգորի Նարեկայ Վանից վանականի, Մաշտեան ոդբերգութեանց տաղք Վարդավառին, Վենետիկ, 1840, էջ 482։

Աբրաեկակից—«Եւ ապա բերան ի բերան խօսելով գիմս յորդորեցեր ղմիտս, որ կրսերս եմ ուսմամբ՝ և յետին քան զամենեսեան, իսկ ժամանակաւ՝ քան զբաղում արբանեկակիցս իմ»։ Ուխտանէս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց, Հատուած Ա, Վաղարշապատ, 1871, էջ 3։

Արզրէդ—«Նստէր անդ ներքինի մի մեծ դայեակ որդւոյ արքայի, որոյ անուն աշտիճանին յորում կայր՝ կոչէր Արզբէդ, պատուական և մեծարուէր առաջի թագաւորութեաննն։ Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի և ճառ ի վկայսն արևելից, Սոփերք Հայկականք, հ. Ի, Վենետիկ, 1854, էջ 31։

Արձակավնիռ—«Լուծումն մի էր մեղաց, և արձակումն մի էր արձակավնիռ դատաստանին»։ Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի, Կոչումն ընծայութեան, ԺԳ, Վիեննա, 1832, էջ 250։